



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.71-~~65~~

5-80

1762

4n

LIBRARY OF THE
MUSEUM OF
COMPARATIVE ZOOLOGY
AND ANATOMY
HARVARD UNIVERSITY
CAMBRIDGE, MASS.

2003

891-71-93

S-80

un

Ч О У В Л . С О Л У С О З И

„Ясная Поляна“

№ 9270

Ч О Л О Т У Р

(Ф О Р М А Т) : С У В Е Р

*1002
26262*

Ф а р м а ц и я

Ф Е Л Ь Д О Ф И Д Е Р Т В Е Н Н Ы Е



И Т Ф И Т О

З О Р Д А С Т А Н Т А У Ч Е Б Н О - М Е Т О Д И Ч Е С К И Е С О Ч И Н Е Н И Я

С Е Р И Я Ф О Р М А Т , № 1 . 2 .

1891

5662

Дозволено цензурою. 28 Января, 1891 г. Тифлисъ.



Тиф.: И. Мартиросіанца, Орб. ул., д. 1/2.



Կ Ո Ւ Ռ Մ Բ

1.

Մեզնից երեք հարիւր տարի առաջ Խա-
լիպի Քէնուա քաղաքում անցրում էր Կոլումբ
անուհով մի մարդ: Քաղաքը նստած էր Միջ-
երկրական ծովի եզերքին և Կոլումբը դեռ
մանկութեան օրերից սիրում էր զբօսնել ծովա-
փի վրայ: Զբօսնելիս նա տեսնում էր անթիւ
նաւեր և ասում էր ինքն իրեն. «Երբ որ մե-
ծանամ, ես էլ նաւերով ման կըզամ և օտար
երկիրներ կըտեսնեմ»:

Եւ նա սկսաւ աշխարհագրութիւն սովորել
աչն երկիրների հետ ծանօթանալու և իմանալու
համար, թէ ո՞ր տեղ ինչ ազգեր կան և ինչ
ճանապարհով կարելի էր հասնել նրանց մօտ:

Կոլումբն այդ բոլորը կարգաց և ասաց.
«Այժմ պէտք է գնամ, աչքովս տեսնեմ, ինչ որ
սովորել եմ զրքերից: Հօրեղբայրս ունի երկու
նաւ. կըծառայեմ նրա մօտ և նրա նաւերով
գտնագան տեղեր կընաւեմ»:

Կոյումբըրը գնաց, Հօրեղբօր մօտ ծառայութեան մտաւ:

Ահա մի օր, մինչ նրանք միասին նաւում էին, աւաղակներ յարձակուեցան նրանց նաւի վրայ և սկսան կռուել: Կռուի միջոցին երկու նաւն էլ կրակ բնկան: Սարսափած նաւաստները ծովը նետուեցան. Կոյումբըն էլ ջուրն ընկաւ և մի փայտից բռնելով դէպի եզերքը լողաց: Բայց եզերքը հինգ վերստի չափ հեռու էր: Նա հազիւ կարողացաւ այն տեղ հասնել և գնաց պորթուգալացոց: Աստաբօն քաղաքը, որ նրանց թագաւորի բնակութեան տեղն էր:

Մի քանի ժամանակ Կոյումբըրը մնաց Ախասաբօնում և ամուսնացաւ մի նաւաստի աղջկայ հետ. յետոյ սկսաւ գանազան երկիրներէ վրայ հարց ու փորձ անել իւր աներին և ուրիշ նաւաստներին: Արանք էլ սիրով պատմեցին, ինչ որ գիտէին իրենց տեսած կղզիների ու ծովերի մասին, և Կոյումբըն ասաց. «Երբ որ դուք ճանապարհորդելու գնաք, ինձ էլ հետերգ տարէք»:

Կղզիները գնալու ժամանակը որ հասաւ, նաւաստներն ասացին Կոյումբըրին. «Արի, գնանք»: Կոյումբըրը գնաց:

Մի կղզի որ հասան, այն տեղի մարդիկն ասացին Կոյումբըրին. «Քամին շատ անգամ այնպիսի ծառեր է բերում դէպի մեր ափը, որոնց

նմանը բնաւ չես տեսնիլ մեր երկրում: Մի օր էլ երկու մեռած մարդիկ բերուեցան այս կողմը. նրանց մորթի գոյնը մերինին նման չէր. ուրիշ երկրից կըլինէին»:

Կոյումբըրը լսեց այդ բոլորն ու մտածեց. «Արդեօք այդ ինչ մարդիկ էին և ինչ տեսակ ծառեր էին. չլինի թէ ծովի միւս կողմը մի ուրիշ երկիր գտնուի և այդ ծառերն ու մարդիկը այն տեղից դէսը բերուած լինին: Ե՛կ որոնեմ այդ երկիրը. գուցէ գտնեմ: Բայց որոնելու համար փող է հարկաւոր. սր տեղից ձգեմ»:

Կարծում էր թէ պէտք եղած փողը իւր մայրենի քաղաքում կըգտնէ,— բայց այնտեղ միայն ծաղրեցին նրան և ոչ մի գումար չըտուին: Այն ժամանակ նա պորթուգալացոց թագաւորի մօտ գնաց և նրանից փող ուզեց: Թագաւորն էլ չըտուաւ. բայց իմանալով թէ ինչ բանի համար է փող ուզում, ինքը նաւաստներ զրկեց այն երկիրը պտրելու, որի մասին պատմել էր Կոյումբըրը: Նաւաստները պտույտ եկան, պտույտ եկան— ոչ մի երկիր չըգտան և դատարկ յետ եկան:

Կոյումբըրը գնաց սպանիացոց թագաւորի մօտ. գուցէ սա տար նրա ուղած փողը: Բայց հէնց այդ միջոցին թագաւորը պատերազմում էր թշնամիների դէմ և այս սլառճառով ինքն

էլ փողի կարօտ էր: Նա կանչեց իւր զիտնա-
կաններին և խորհուրդ հարցրեց, թէ արդեօք
տա՛յ Կոլումբի խնդրած փողը թէ չտալ: Վճռե-
ցին չտալ: Նրանք ասացին. «Թագաւոր, եթէ
ծովի միւս կողմը գտնուի էլ մի երկիր, այնպէս
հեռու կըլինի, որ մարդ երեք տարիից էլ չի
հասնիլ այնտեղ—փողդ էլ դուր կըկորչի»:

Կոլումբը զիմեց իւր Քարթողիմէոս եղբօրը,
թէ «Քնա, եղբայր, անգլիացոց թաքաւորի մօտ
և նրանից փող ազիր ինձ համար»: Եղբայրը
գնաց: Անապարհին աւաղակներ ընկան վրան,
ունեցած չունեցածը յափշտակեցին, իրեն էլ
գերի տարան: Նա փախաւ աւաղակների ձեռ-
քից և այդպէս հասաւ Անգլիա:

Անգլիա որ հասաւ, ոչինչ չունէր—ոչ փող,
ոչ հագուստ, ոչ էլ զիտէր, թէ ինչպէս երևնայ
թագաւորին: Սկսաւ պատկերներ նկարել ու վա-
ճառել: Այսպիսով փոքր ինչ գումար որ հաւա-
քեց, շորեր կարել տուաւ և գնաց թագաւորի
մօտ:

Նա ասաց. «Թագաւոր, ապրած կենաս:
Եղբայրս ուզում է մի նոր երկիր գտնել, միայն
թէ փող չունի. արդեօք չե՞ս տալ»: Թագաւորն
ասաց. «Տեսնեմ»: Քարթողիմէոսն էլ գիր գրեց
Կոլումբին, թէ «Յի, եղբայր. գուցէ անգլիացոց
թագաւորը փող տալ քեզ»:

Կոլումբը միտքը դնելով դնալ եղբօր մօտ,
ուզեց առաջուց բարով մնա ասել իւր որդուն,
որ սովորում էր մի վանքում: Վանահայրն ասաց
Կոլումբին. «Սպասիր, դեռ մի դնար Անգլիա:
Ես նամակ կըղրեմ սպանիացոց թագուհուն.
գուցէ նա տալ ուզած փողդ»:

Վանահայրը զրեց նամակը: Քայց թագաւ-
որն յօժար չէր փող տալու առանց թագաւորի
զիտութեան և այս պատճառով նրանից խոր-
հուրդ հարցրեց: Թագաւորն էլ վախենալով որ
փողը դուր կըկորչի, նորից զիտնականների
ժողով կանչեց: Երկար բարակ խօսելուց լետոյ
նրանք այս անգամ էլ ծաղր արին Կոլումբին և
ասացին. «Ա՛յ քեզ խելօք մարդ. եթէ այնտեղ
երկիր լինէր, արդէն վաղուց գտնուած կըլի-
նէր»: Իսկ Կոլումբի բարեկամները նրա կողմը
բռնեցին և ասացին. «Թագաւոր, այժմ դու
պատերազմդ վերջացրել ես, փող էլ ունիս,—օգ-
նիր Կոլումբին, որ իւր գործը յառաջ տանէ»:

Վերջապէս թագաւորը վճռեց փող տալ.
նա հրամայեց նստեր շինել և իւր մօտ կանչեց
Կոլումբին: Կոլումբը որ եկաւ, թագաւորն ա-
սաց. «Կոլումբ, ահա երեք նաւ եմ տալիս քեզ.
դրանց իշխանը դու կըլինիս և կ'երթաս ծովի
միւս կողմը նոր երկիրներ պտրելու: Երբսր գտ-
նես ո՛ր և է երկիր, ես քեզ այն տեղի կուսա-

կալ կ'անեմ, ընտանիքդ էլ չեմ մոռանալ, քեզ էլ միշտ փող կ'ուղարկեմ»:

Կոլումբը վերցրեց մի տարուայ պաշար 90 հոգու համար և սկսաւ ճանապարհի պատրաստուել: Ամեն բան պատրաստելուց յետոյ գնաց սպանիացոց Պալոս քաղաքը: Այնտեղ շատ մարդիկ էին հաւաքուել նրան ճանապարհ ձգելու համար: Կոլումբը մտաւ վանքի եկեղեցին և աղօթք արաւ Աստծուն: Աղօթքից յետոյ նաւ նստաւ իւր նաւատների հետ միասին. ժողովուրդն էլ գանչեց. «Քարի ճանապարհ — բարով գնաք. Աստուած ձեզ ամենքիդ օգնակիւն»:

Նաւերի առաջատներն արձակեցին ու հեռացան: Երկար ժամանակ ժողովուրդն եզերքի վրայ կանգնած մնաց, նաւերի հեռանալը դիտելով. երբ որ նաւերը բոլորովին անհետացան, բազմութիւնն էլ ցրուեցաւ:

2.

Կոլումբը դիմեց նախ և առաջ դէպի Կանարեան կղզիները: Նաւի ղեկաւարը չէր ուզում այն տեղ նաւել. այս պատճառով էլ ղեկը կոտրեց: Նաւի մարդիկը վախեցան և ղեկի կոտրուելը վատ նշան համարելով, ասացին Կոլումբին. «Եթէ իսկույն չես չղաւնանք, բոլորս էլ

կորած ենք»: Իսկ Կոլումբն ատաց. «Կորչելու վտանդ չկայ. միայն պէտք է ղեկը նորոգել»: Նաւատներն ասացին. «Ուրեմն գու մեզ կարցնելու միտք չունիս»: Կոլումբը երկար ժամանակ ազատում էր նրանց, որ միամիտ լինին և չվախենան. հազիւ հազ կարողացաւ հանդատացնել: Յետոյ ղեկը նորոգեցին ու շարունակեցին յառաջ գնալ:

Հասան Կանարեան կղզիները: Այնտեղ վերցրին թարմ մսի ու ջրի պաշար և նորից յառաջ նաւեցին: Քամի չլինելուն պատճառով շատ ծանր էին յառաջ գնում, և միայն երրորդ օրը կղզիներն աչքից կորցրին:

Հէնց որ կղզիներն անհետացան, բոլոր նաւատները սկսան լաց լինել, կուրծքերը ծեծել ու զոչել. «Ահա կորանք. չորս կողմը ոչ մի երկիր չէ երևում. սըր էլ նայես՝ ծով ու երկինք է, գեախն չկայ»:

Վեցերորդ օրը մի ծառ տեսան ջրի երեսին և ամենքը շտապեցին այդ ծառը դիտելու, կարծելով թէ գետինը մօտիկ է. բայց գետին չկար: Յառաջ նաւելով հատան մի տեղ, ուր ջրի երեսը ծածկուած էր արօտով: Այդ ուր տեսան վախեցան. կարծեցին թէ հատել են ծովի ծայրը և թէ քարեր կրլինին արօտի տակ: «Ա՛խ, ինչո՞ւ եկանք մենք քեզ հետ», ասացին

նրանք Կոլումբին. «եկանք որ խեղդուինք»: Կոլումբն ասաց. «Չէք խելագուիլ, միամիտ եղէք, արօտի տակ քարեր չկան»:

Նաւերն այնպէս անցան արօտի վրայով, ինչպէս որ մենք անց ենք կենում մի կանաչ գաշաի վրայով: Երբ որ անցան, նրանց առջև նորից մի լայն ծով ու կապուտ երկինք բացուեցաւ. իսկ երկրի նշան անգամ չէր երևում:

Մի քանի օրից լետոյ թռչուններ տեսան. այդ թռչունները գիշերով նաւի վրայ էին նստոտում և արևը բացուելուն պէս՝ հեռանում նրանց երևալը շատ ուրախացրեց նաւորդներին, որոնք ասում էին. «Եթէ այստեղ թռչուններ կան, ուրեմն երկիրն էլ հեռու չի լինիլ»:

Մի օր էլ թռչող ձկներ տեսան. այդպիսի կենդանիներ դեռ երբէք չէին տեսել, և շատ զարմացան: Ձկների մարմինը կապուտ էր, իսկ թևերը արծաթափայլ:

Նաւաստները ամեն մի ժամ սպասում էին, թէ ահա շուտով երկիր կ'երևի, բայց նա էլի չէր երևում: Այն ժամանակ միւս երկու նաւի նաւապետներն էլ Կոլումբի վրայ բարկացան. իսկ նա ասաց. «Այսքան ժամանակ նաւելուց լետոյ՝ գոնէ էլի մի երեք օր սպասեցէք: Եթէ երեք օրից լետոյ էլ երկիր չտեսնենք, խօսք

եմ տալիս, որ դէպի տուն կրվերադառնանք, Ապանիա կ'երթանք»:

Բոլորն էլ հաւանեցան այդ բանին և խօսք տուին անտրտունջ լսել Կոլումբին: Կոլումբը հաւատացած էր, որ երեք օր անցնելուն պէս երկիրը լերեւան կրգար: Թռչուններն ամբողջ շարմերով թռչկոտում էին ծովի երեսին. գիշերով տաք քամի էր փչում նաւի դէմ, որ բնաւ ծովի կողմից փչող քամուն չէր նման: Սակայն էլի մի օր անցաւ, իսկ ցամաքը չէր նշմարվում: Գիշերը որ վրայ հասաւ, Կոլումբը հրամայեց հաւաքել նաւերի առազաստները. այդ նրա համար անել տուաւ, որ նաւերը յանկարծ դետնին զարկուելով չխորտակուին: Նա յայտնեց բոլոր նաւաստներին, որ թագուհին խոստացել է երկու հազար հինգ հարիւր բուբլի պարգև տալու այն մարդուն, որ ամենից առաջ կը տեսնէ ցամաքը: Նրանք ամբողջ գիշերը քուն չեղան: Ամենքը բարձրացել էին կայմերի վրայ. ամեն մէկն ուզում էր միւսներից առաջ տեսնել ցամաքն և տէր լինել պարգևին: Բայց ցամաքը չէր երևում:

Արշալուսին Կոլումբն էլ վերև բարձրացաւ յառաջ նայելու, և մի կրակ նշմարեց: Նա խակոյն իւր մօտ կանչեց նաւաստներին, և նրանք աչքերը կրակի կողմը դարձնելով տեսան

որ նա շարժվում է: Կոլումբը շատ ուրախացաւ, որովհետեւ գուշակեց, թէ այն կրակը որ և է նաւակի մէջ վառուած կրլինէր. իսկ նաւակով զիշեր ժամանակ չեն հեռանում եզերքից: Հէնց որ լուսացաւ, միւս նաւից աղաղակ թնդաց, թէ «Գետին է երևում, գետին»: Կոլումբի նաւը փոքր ինչ չետ մնացած լինելով, նրա վրայից դեռ չէր տեսնվում գետինը: Զուտով Կոլումբն էլ տեսաւ նրան, և ամեն նաւերից ուրախութեան ձայն հնչեցրին: Այժմ ամենքն էլ ամօթ զգացին, որ չէին հաւատացել Կոլումբին, և ասացին նրան. «Կոլումբ, ներիր մեզ, որ մենք չէինք հաւատացել խօսքերիդ և քեզ հակառակում էինք»: Կոլումբն ասաց. «Ինչ որ եղել է, մոռացել եմ, չեմ էլ բարկանում ձեզ վրայ»:

Նա հրամայեց իջեցնել երկու նաւակ. մէկի մէջ ինքը նստաւ նաւապետների հետ միասին. միւսում նստան նաւաստներն ու զինուորները, և գէպի եզերքը նաւեցին: Քանի նրանք մօտենում էին եզերքին, այնքան էլ զարմանում էին իրենց տեսած բաների վրայ: Ծովափը ծածկւած էր անտառով. ծառերն այն աստիճան հաստ էին, որ չորս մարդ միասին չէին գրկել մէկի բունը:

Ամեն բան, ինչ որ տեսնում էին, զանազանվում էր իրենց երկրում եղած բաներից:

Նրանք եզերքին որ մօտեցան, անտառից վարենի մարդիկ դուրս վազեցին: Գրանց մորթը կարմրագոյն էր, գլխի մազը սև, երկայն ու կոշտ. մօրուք չունէին, մարմնով մերկ էին. միայն թէ գլուխների վրայ փետրի փունջեր էին ցցուած: Այդ մարդկանց կաշին ու դէմքը զանազան գոյներով ներկուած էր. ականջներից ու ռնգներից կախած էին ոսկու կտորներ և օղեր:

Վայրենիներն ապշած նայում էին Կոլումբի ու նրա ընկերների վրայ և չէին հասկանում, թէ որ տեղից և ինչո՞ւ համար են եկել նրանք: Կոլումբն առաջինը ոտք դրաւ ափի վրայ, չետոյ միւսներն էլ ցամաք իջան: Նրանք շինեցին մի մեծ խաչ, գետնին տնկեցին և փառք տուին Աստուծուն, որ յաջողակ էին հասել այն տեղ :

Մինչ նրանք աղօթք էին անում, վայրենիները կանգնած դիտում էին նորեկ մարդկանց և նորեկ նաւերը: Իսկ Կոլումբն ու նրա ընկերները սկսան հրացաններ տաքացնել: Վայրենիները տաքոցներ որ լսեցին՝ կարծեցին թէ Կոլումբն ու նրա մարդիկը աստուածներ են, արեգակի որդիք են: Վայրենիները պաշտում էին արեգակն և նրան աղօթք անում: Նրանք սկզբում շատ էին վախենում սպանիացիներից. բայց երբ որ նաւաստները մօտեցան

նրանց ու զանազան բաներ ընծայեցին, օրինակի համար—մատանիներ, փայլուն կոճակներ, հիլուններ,—այն ժամանակ նրանց վախը կորաւ, և նրանք էլ տուին նաւաստներին ինչ որ ունէին, այսինքն ոսկու կտորներ ու մանուածներ: Այլումքն ու նրա ընկերները մինչև երեկոյց ցամաքի վրայ մնացին. մթնելու ժամանակ նաւնստան և լետ դարձան դէպի միւս նաւերը: Նաւերը հեռու չէին եղերքից: Վայրենիները տեսնելով որ նրանք հեռանում են, շուտ շուտ վազեցին դէպի իրենց նաւակներն ու ձանապարհ ձգեցին հիւրերին:

3.

Այլումքի գտած երկիրը մի կղզի էր, որովհետև չորս կողմից պատած էր ջրով: Միւս օրը Այլումքը գնաց այդ կղզին աչքէ անցնելու. ուր որ դնում էր՝ վայրենիները հետևում էին նրան:

Նա հարց ու փորց արաւ այդ վայրենիներին, թէ ո՞ր տեղից էին ոսկի ձարում: Նրանք էլ պատասխանեցին. «Մեզ մօտ ոսկի չկայ. բայց մեզնից փոքր ինչ հեռու որ դնաս, ուրիշ կղզիներ կը տեսնես—այն տեղ ոսկին առատ է. մենք էլ բերում ենք այն տեղից»:

Այլումքը վերցրեց իւր նաւի վրայ վեց վայրենի մարդ, որ ձանապարհ ցոյց տան իրեն,

և գնաց ոսկի պտրելու: Նաւորդներն անցան զանազան կղզիների մօտով և հարցնում էին ընակիչներին, թէ արդեօք նրանք ոսկի ունին թէ չունին: Բնակիչներն էլ պատասխանում էին. «Մեզ մօտ ոսկի չկայ. աւելի հեռու որ դնաք, այնտեղ ոսկի կը գտնէք»:

Մի կղզու վրայ նաւորդները շներ տեսան: Գրանք մեր շների նման էին, բայց չէին հաջում: Մեր շներն էլ, երբ այն տեղ են տարվում, հաջելը մոռանում են: Յետոյ տեսան ահագին ալլիգատորներ (մեծ մողէզներ): Աերջապէս հասան Աուբա կոչուած կղզին, և այն տեղ Այլումքն ուղեց կարկատել իւր նաւերը: Երբ նա մօտեցաւ եղերքին, նրան տեսնող բնակիչներն իսկոյն փախան և միայն մէկը մնաց: Այլումքն ընտրեց երկու նաւատ և ասաց. «Գնացէք լայտնեցէք հնդիկներին (վայրենի բնակիչները այդպէս էին կոչվում), որ նրանք մեզնից չխտնան. մենք ոչ մի վնաս տարու չենք նրանց»: Նաւաստները ցամաք իջան և լայտնեցին Այլումքի խօսքերն այն մէկ հնդիկին: Հնդիկն իւր մօտ տարաւ նրանց: Նաւաստները լետ դալուց յետոյ ասացին Այլումքին. «Մենք շատ ման եկանք այս կղզու վրայ, հօղը լաւ է՝ ամեն բոյսերով առատ է: Պաշտերի վրայ տեսանք սիմինդր և մի ուրիշ բոյս, որի արմատից

այլուք են շինում ու հաց թխում: Գաշտերից անցկենալով հնդիկների գիւղը հասանք. դա ունի լիսուն հատ փայտաշէն տուն: Գիւղի ձե-
րերը մեր առջևն ելան և մեր թւերից բռնելով իրենց մօտ տարան: Տարան մի տուն ու աթոռ-
ների վրայ նստեցրին: Այդ աթոռները գազանի ձև ունին— գլուխներով ու աչքերով են. աչքերն էլ դուռ ոսկուց են: Նստեցրին մեզ այդ աթոռների վրայ, իսկ իրենք գետնի վրայ պղպեցան և մեր ձեռքն ու ոտքը պաչ արին: Երևի թէ մեզ աստուածների տեղ էին գրել: Յետոյ պատուեցին մեզ կաղնի նման արմտիքով: Առաջ միայն տղամարդիկ էին մեզ հետ նստած. յետոյ նրանք հեռացան և կանայք եկան: Կանայքն էլ երկրպագութիւն արին մեզ և մեր ձեռքերը համբուրեցին: Երբ որ մենք ուզեցինք վերագառնալ, նրանք վեր կացան մեզ ճանապարհ ձգելու. բայց մենք չուզեցինք նրանց մեզ հետ բերել, այլ վերցրինք միայն թագաւորին ու իւր որդուն: Ահա դրանք հասցրին մեզ այստեղ»:

Կոլումբը հրամայեց նաև մտցնել թագաւորին և սկսաւ ոսկու մասին հարցնել նրան: Վայրենին շատ զարմանում էր, թէ ինչացո՞ւ է Կոլումբին այդ ոսկին, և ասաց. «Մեզ մօտ ոսկի չկայ, բայց եթէ դնաս դէպի արևմուտք, կըղ-

ղիներ կրտսնես. այն տեղ սրբան ոսկի ուզե-
նաս, կըճարես»:

Կոլումբը տասն վայրենի առաւ Կուբայից և ճանապարհ ընկաւ նրանց հետ միասին: Իսկ Պինցոնը՝ միւս նաւի պետը, բաժանուեցաւ Կոլումբից. նրա նպատակն էր աւելի շուտ հասնել այն կղզիները, ուր վայրենի թագաւորի ասելով շատ ոսկի պիտի գտնուէր: Կոլումբը փորձեց հասնել նրա ետեւից. բայց չհասաւ, որովհետեւ իւր նաւը ծանրաքայլ էր, շուտ շուտ յառաջ չէր գնում: Այն ժամանակ Կոլումբը թնդանօթների արձակեց, նշան տալով, որ Պինցոնը վերագառնայ. սա բանի տեղ չըզբաւ այդ նշանն և աւելի յառաջ շտապեց: Այդ իջողին սաստիկ քամի բարձրացաւ. ծովի վրայ մնալը վտանգաւոր էր, և Կոլումբը դէպի Կուբա կղզին լետ նաւեց:

Երբ որ նա ցամաք իջաւ, հնդիկները նորից նրա մօտ եկան: Նրանք որդեր և հում հում ձկներ էին ուտում. ձկան աչքն էլ հանում ուտում էին: Սպանիացիք էլ փորձեցին այդպէս անել և տեսնելով որ համեղ է, սկսան ուտել:

Քամին որ հանդարտուեց, Կոլումբը նորից ճանապարհ ընկաւ: Փոքր ինչ նաւելուց յետոյ նա էլի տեսաւ մի նոր երկիր: Վայրենիները

1001



լեզուով գրա անուան էք Գալիթի. իսկ Կոլումբն անուանեց նրան Նոր Սպանիա: Նրա մօտենալու միջոցին երկրի բնակիչները, որ նույնպէս Հնդիկ էին, իսկոյն փախան եզերքից: Նրանք էլ կուբացիներն պէս դեղնագոյն ու մերկ էին. միայն թէ ականջներն ու ռնդերն վրայ աւելի շատ ոսկեղէն դարգեր ունէին: Կոլումբը մի քանի մարդ զրկեց, որ ափ իջնեն: Նրանք մի Հնդիկ կին բռնեցին և զանազան ընծաներ տուին նրան: Կինը գնաց իւր ազգականներն մօտ և պատմեց ինչ որ պատահել էր: Փոքր ինչ յետոյ Կոլումբը տեսաւ, որ Հնդիկներն թագաւորն իւր մօտ է գալիս: Թագաւորն առջևից գալիս էին չորս հոգի. միւսներն էլ բերում էին նրան շալակած պատգարակով: Թագաւորն էլ, նրա մարդիկն էլ մերկ էին: Կոլումբն այդ միջոցին ճաշելու վրայ էր: Թագաւորը որ եկաւ, Կոլումբը զինով հարկեց նրան. նա խմեց և միւսներին տուաւ բաժակը, որ նրանք էլ խմեն: Առջից յետոյ թագաւորն ընծայեց Կոլումբին մի ահագին կտոր ոսկի և մի գօտի. Կոլումբն էլ, փոխարէնը վճարելով, մի վերմակ, մի զոյգ մաշիկ ու մի մանեակ պարգևեց նրան: Այդ պարգևները շատ դուր եկան թագաւորին, և նա ասաց. «Կոլումբ, ես այնպէս սիրեցի քեզ, որ ինչ էլ խնդրես, կրկատարեմ»: Նրա հեռա-

նալու միջոցին Կոլումբը հրամայեց թնդանօթ արձակել: Հնդիկները սաստիկ վախեցան թնդանօթից. նրանք Աստուած կարծեցին թնդանօթ ձգողներին և սկսան նրանց ձեռքն ու ոտքը համբուրել:

Գալիթիի վրայ էլ ոսկի չկար. այս պատճառով Կոլումբը թողաւ այդ կղզին և աւելի հեռու նաւեց: Նաւի ղեկավարը նա ինքն էր. ամբողջ օրը ղեկը բռնելուց յոգնելով, զիշերուայ դէմ նա ուրիշին յանձնեց ղեկավարել և ինքը գնաց քնելու: Հէնց որ նա քնի գնաց, բոլոր մարդիկն էլ քնեցին, ղեկավարն էլ քնեց: Յանկարծ հոգմ բարձրացաւ և նորից դէպի կղզին քշեց նրանց նաւը:

Կղզու եզերքին մօտենալիս նաւը մի քարի ղիպաւ ու ճռնչեց: Նաւաստները զարթեցան, Կոլումբն էլ տեղից թռաւ ու տեսաւ, որ նաւի յատակը ծակուել է և ջուրը ներս է վազում: Իսկոյն սկսան դուրս թափել ջուրը և բոլոր ծանրը բաները ծովը նետեցին, որ նաւը թեթեւանայ ու բարձրանայ: Բայց ջուրը քանի գնում աւելանում էր: Այն ժամանակ նաւին կապուած մակույկները վայր թողին, մէջերը նստան և ցամաք իջան, որ զիշերն այնտեղ անցկացնեն: Առաւօտեան Կոլումբը մարդ ուղարկեց Հնդիկներն թագաւորն մօտ յայտնելու նրան, ինչ որ պատահել էր:

Թագաւորը կանչեց իւր մարդկանց և մա-
կոյի նստելով շտապեց վնասուած նաւին օգնե-
լու: Հնդիկները շատ բան ազատեցին և ինչ որ
զտան՝ ծովափի վրայ շարեցին. և Թագաւորն
ասաց Կոյումբին. «Այս բաները ինձ յանձնիր—
ես պահեմ. ինձ մօտ որ լինին, ոչ ոք չի գո-
ղանալ. քեզ մօտ որ մնան, կրղողանան»: Կո-
յումբն էլ բոլոր իրեղէնները նրան պահ տուաւ:
Թագաւորը հրամայեց մի առանձին տեղ տա-
նել նրանց և պահապաններ դրաւ, որ ոչ ոք
չփախցնէ: Յետոյ ասաց Կոյումբին. «Քանիդ
ողջ կըմնան. իսկ նաւի հետ կորածների մասին
մի տրտմիր. մենք կըտանք քեզ ամեն բան,
որովհետեւ դու սիրով վարուեցար մեզ հետ»:
Թագաւորը շատ ոսկի ընծայեց Կոյումբին. միւս
հնդիկներն էլ ոսկի բերին ու բաշխեցին նա-
ւատներին: Մի հնդիկ մի մեծ կտոր ոսկի
տուաւ նաւատներից մէկին և ոսկու փոխա-
րէն մի դանդակ վերցրեց նրանից: Այդ դանդակը
ստանալուն պէս՝ վայրենին վազելով փախու-
կարծում էր թէ լաւ խափել է նաւատին: Նաւատները
շատ սիրեցին այդ կղզին. բայց Կոյումբի սիրտը
հանգիստ չէր: Նա գէտ ոչ մի
լուր չունէր Պինցոնից:

Կոյումբի ձեռքի տակ էլի մի նաւ կար՝
երրորդ նաւը. բայց դա փոքր էր, և ամենքը

չէին կարող մէջը մտնել: Երկար ժամանակ
մտածեց Կոյումբը, թէ ինչ անէր: Վերջապէս
հաւաքեց նաւատներին և ասաց. «Ես ուզում
եմ Սպանիա վերադառնալ. ձեզնից կէսը այս
տեղ կըթողնեմ, կէսը հետս կըտանեմ»: Մնալու
ցանկացողներ շատ կային: Հնդիկների Թագաւորն
աչք սր լսեց, ասաց Կոյումբին. «Ես ուրախ եմ,
որ բոլորդ միասին չէք հեռանում. եթէ ոչ՝ միւս
կղզիներից կարախրներ են դալիս մեզ մօտ—
ուժեղ ու չար մարդիկ են. նրանք միշտ մեզ
կողոպտում են, և մենք անտառ ենք փախչում
նրանց ձեռքից: Եթէ այս անգամ էլ մեզ
մօտ գան, քո նաւատները մեզ կըպաշտ-
պանեն»:

Կոյումբն ասաց. «Ն հարկէ կըպաշտպա-
նեն»: Նա հրամայեց իւր մարդկանց, որ մի
պատերազմ ներկայացնեն: Նրանք էլ սկսան
հրացաններ պարպել և պատերազմ ներկայացնել:
Հնդիկները Թագաւորն այդ որ տեսաւ, ասաց.
«Թող գան հիմայ կարախրները. էլ չեմ վախե-
նում նրանցից. մենք նրանց ամենքին կը
ջարդենք»:

Կոյումբը մի տեղ ընտրեց ծովեզերքին և
այնտեղ մի փոքրիկ բերդ շինել տուաւ. զբա-
շուրջը հրամայեց պարիսպ քաշել և վրան
հրետներ դնել (Թնդանթներ):

... Բերդի շինութիւնը վերջացնելուց յետոյ
 Կոլումբը սկսաւ Սպանիա գնալու պատրաստու-
 թիւն տեսնել: Այդ էլ որ վերջացաւ, նա մի
 իշխան կարգեց բերդում մնացող մարդկանց
 վրայ և ասաց. «Հրամայում եմ ձեզ, որ իրար
 հետ հաշտ ապրիք, չըկուռիք և հնգիկները
 թագաւորին չըվշտացնէք. ես շուտով կըվերա-
 դառնամ»: Հնգիկները թագաւորն եկաւ ճանա-
 պարհ ձգելու Կոլումբին և իւր զլխի սուկէ թա-
 զը հանելով նրան հագցրեց: Կոլումբն էլ մի
 նոր խալաթ ու մի գոյգ կօշիկ ընծայեց թա-
 գաւորին և մարգարտէ մանեակ կախեց նրա
 վզին:

Կոլումբը բարով մնա ասաց ամենքին,
 վերցրեց իւր ստացած, ոսկիները, հետն առաւ
 մի քանի գոյգ Սպանիայում չըդանուող թռչուն-
 ներից ու ծառերից, մի քանի հոգի էլ հնգիկի,
 ու գնաց:

4.

Կոլումբը արդէն երկու օր է որ ճամբու
 վրայ էր. կողիներն արդէն անհետացել էին:
 Երբորդ օրը յանկարծ մի ուրիշ նառ տեսաւ
 և երբ որ հասաւ ետեւից, նկատեց որ գա Պին-
 ցոնի տարած նաւն է: Կոլումբը հարցրեց Պին-

ցոնին. «Ի՞նչու հեռացար դու մեզնից»: Պին-
 ցոնը պատասխանեց: «Ես չէի հեռանալ, եթէ
 քամին չըբռէր. քամին այնպէս սաստիկ էր,
 որ ես չկարողացայ դեկաւարել»: Կոլումբը ոչ մի
 պատասխան չըտուաւ նրան, միայն թէ մտածեց.
 «Այս մարդու բոլոր խօսքերը սուտ են»:

Երկու նաւն էլ այժմ միասին դէպի Սպա-
 նիա գլմեցին: Գեռ շատ հեռու չէին գնացել,
 որ յանկարծ փոթորիկ բարձրացաւ: Ահագին ու
 ամպերը բոլոր երկինքը պատեցին, օրը մթնեց:
 Նաւաստները յարկի վրայ հաւաքուեցան, իսկ
 քամին մէկ ալիքից միւսի վրայ էր ձգում նա-
 ւերը, և նրանց կայմերն ու պարանները ճըռ-
 ճուււմ էին: Յետոյ կայծակը փայլատակեց, եր-
 կինքը որոտաց և սաստիկ անձրև տեղաց:
 Մարդիկ սարսափեցան. ոմանք չըքած աղօթք
 էին անում, ոմանք էլ ահից փուռել էին յա-
 տակի վրայ:

Կոլումբը վերև գնաց, չորս կողմը նայեց
 ու տեսաւ, որ նաւերն ընկզմելու, ջրի տակ
 գնալու վտանգի մէջ են: Նա իսկոյն իւր խը-
 ցիկը մտաւ ու վերցրեց մի մագաղաթ: Մագա-
 ղաթը կաշուց է շինվում և վրան կարելի է
 բան գրել. ջրի մէջ էլ չէ թրջվում: Կոլումբը գրեց
 այդ մագաղաթի վրայ իւր ուղեւորութեան բոլոր
 անցքերն ու տեսած բաները. յետոյ գլանակի

պէս ոլորեց թերթն ու մի տակառի մէջ դրաւ, տակառն էլ ծովը նետեց և ասաց ինքն իրեն. «Գուցէ ես խեխտուիմ. այս տակառը մի օր ո՞ր և է տեղ կը հասնի. մարդիկ կը կարդան, ինչոր գրել եմ մազաղաթի վրայ, և կ'իմանան թէ ինչպէս եմ գտել նոր երկիրը: Այն ժամանակ իրենք էլ գրածիս նայելով ուրիշ երկիր կը գտնեն»: Յետոյ նա մի ուրիշ տակառ վերցրեց, դրա մէջ էլ մի թուղթ դրաւ ու կապեց նաւին: Այնկոծութիւնը, որ ամբողջ գիշեր տևել էր, միայն լուսու դէմ հանդարտուեց:

Փոթորիկը որ անցաւ, նաւաստներն ուխտ արին աղօթք անելու հէնց առաջի եկեղեցում, որ կը պատահէր ճանապարհին: Երկար ժամանակ նաւելուց յետոյ նրանք տեսան մի երկիր և Կոլումբն ասաց. «Իրանք Ագորեան կղզիներն են, որ գտել են պորթագալցիք: Գնանք հարցնենք, արդեօք այդտեղ եկեղեցի կայ թէ ոչ»: Երբ որ նաւերն եղերքի մօտ կանգ աւին, Կոլումբի մարդիկը հարցրին պորթուգալցոց. «Գուք ունիք եկեղեցի»: Պորթուգալցիք ասացին. «Ունինք ս. Աստուածածնայ եկեղեցին»: Նաւաստները պատրաստուեցան ուխտի գնալու: Կոլումբն այնպէս կարգադրեց, որ նրանցից մի կէսը աղօթք անելու գնայ, իսկ միւս կէսը նաւերում մնայ, և ասաց գնացողներին. «Զուտով

վերադարձէք, որ միւսներն էլ ղնան»: Նաւաստները գնացին: Յին անցկացաւ. նրանք չետ չէին գալիս: Կիշերն էլ վրայ հասաւ. էլի չէին գալիս, — ասես թէ կորած լինէին: Առաւօտեան Կոլումբն իմացաւ, որ պորթուգալցիք գերի են բռնել նաւաստներին: Նրանք մտադիր էին Կոլումբին էլ բռնել, որ նրա գրտած երկիրը յափշտակեն: Կոլումբը չըզնաց նաւաստների յետևից, հապա մարդ ուղարկեց պորթուգալցոց մօտ և ասել տուաւ, որ «Յի՛թէ դուք իմ մարդկանց չարձակէք, ես ձեր ամեն կղզիները քարուքանդ կ'անեմ»: Պորթուգալցիք թող տուին նաւաստներին և ասացին նրանց. «Մենք չգիտէինք, որ դուք սղանիացի էք. եթէ ոչ՝ չէինք բռնիլ ձեզ»:

Նաւաստների վերադառնալուց յետոյ նաւերը նորից յառաջ ղիմեցին ու հասան Պորթուգալիս: Կոլումբը ուրիշի բերնով իմաց տուաւ պորթուգալցոց թագաւորին, թէ ինքը մի նոր երկիր է գտել և այժմ տուն է գնում: Թագաւորն իւր մօտ կանչեց նրան և ասաց. «Արի, Կոլումբ, դու ինձ մօտ ծառայիր»: Կոլումբն ասաց. «Չէ, ես ձեզ մօտ չեմ ծառայիլ, հապա կ'երթամ սպանիացոց թագաւորի մօտ կը ծառայեմ, որովհետև նա էր, որ ինձ նաւեր տուաւ»: Պորթուգալիացի թագաւորը ինչպէս

նրան. «Գէ, պատմիր, որ ես էլ իմանամ, թէ ինչպէս ես նաւորդեի»: Եւ Կոլումբը պատմեց իւր բոլոր ճամբորդութիւնը: Յետոյ մնաս բարով ասաց թագաւորին և հրամայեց նաւաստներին, որ նաւերը կարգի բերեն:

Երբ որ նաւերը կարգի բերուեցան, Կոլումբը հրաման տուաւ նաւելու զէպի սպանիացոց Պալոս քաղաքը, որտեղից որ առաջին անգամ դուրս էր եկել նոր երկիր պտրելու համար: Հէնց որ լուր տարածուեցաւ քաղաքում, թէ Կոլումբը գալիս է, ժողովուրդը ծովափ վաղեց նրան զիմաւորելու: Նաւերը որ մօտեցան, քաղաղաքում զանդակներ հնչեցրին ու թնդանօթ արձակեցին: Կոլումբը ցամաք իջնելուն պէս զնաց այն վանքը, ուր որ աղօթք էր արել առաջին անգամ ճանապարհ ընկնելու: Նաւաստներն էլ հետը գնացին: Աղօթքից յետոյ նրանք զնացին սպանիական թագաւորի պալատը: Թագաւորը շատ ուրախացաւ, երբ որ տեսաւ Կոլումբին, հրաւիրեց նրան իւր մօտ նստել և իւր բոլոր իշխաններին հաւաքելուց յետոյ ասաց նրան. «Կոլումբ, բարով ես եկել: Պատմիր լսեմ, թէ ինչպէս ես ուղևորել և ինչքեր ես տեսի»: Կոլումբը պատմեց ամեն բան և ցոյց տուաւ իւր բերած ոսկու կտորներն ու սիմինտորը: Թագաւորն ու իշխանները զարմա-

նալով լսում էին նրան: Երբ նա իւր ասելիքն աւարտեց, ամենքը զոհացան Աստուծուց, որ օգնել է Կոլումբին նոր երկիր գտնելու: Յետոյ թագաւորը նրան ասաց. «Գնա, գտած երկիրդ վերադարձիր և իմ փոխանորդն ու զլիաւոր կուսակալն եղիր բոլոր նորազիւտ աշխարհի վրայ»:

Թագաւորը հրամայեց 17 հատ նաւ շինել Կոլումբի համար: Այն ժամանակ շատ մարդիկ գնացին Կոլումբի մօտ խնդրելով, որ նրանց էլ իւր հետ նոր աշխարհ տանէ: Կոլումբն ասաց. «Ամենքդ միասին չէք տեղաւորուիլ նաւերիս մէջ — տեղ չի լինիլ»: Նա վերցրեց իւր հետ միայն մի հազար հինգ հարիւր մարդ, նոյնպէս մի քանի զոյգ ձի, կով, խոզ, որովհետև այդ կենդանիներից ոչ մէկը չէր գտնվում նոր երկրում, — և ամեն բան պատրաստելուց յետոյ էլի մի անգամ ճանապարհ ընկաւ զէպի նոր երկիրը — նոր շինուած նաւերով:

Այս անգամ նաւաստները էլ առաջուայ պէս չէին վախենում ովկիանոսի վրայ նաւելուց արդէն փոքր ինչ վարժուել էին այդ բանին: Մի ամսի չափ նաւելուց յետոյ Կոլումբը տեսաւ մի կղզի և հրամայեց, որ նաւերն այնտեղ գնան: Եղերքին մօտենալիս նա տեսաւ, որ գամբ մեծ կղզի է, վրան էլ մի ջրվեժ կայ — ջուրը

քարերին իսկուելով ծովն էր թափվում սարերից. այս պատճառով նա սաստիկ խոխոջում ու փրփրում էր: Կոլումբն ասաց. «Գուցէ այստեղ մարդիկ էլ լինին»: Սկսան որոնել և գտան երկու երեխայ ու չորս կին: Կանաչքն ասացին Կոլումբին. «Մենք այստեղ գերի ենք ընկած: Այս կղզու վրայ մարդիկ կան. կուռի ժամանակ նրանք սպանում, խորվում և ուտում են տղամարդկանց. իսկ կանանց դերի-են տանում: Ահա մեզ էլ գերի բռնեցին»: Այդ կղզու վրայ Կոլումբն երկար չըմնաց. նա կամենում էր շուտով տեսնել այն կղզին, ուր որ թողել էր իւր նաւատներին Սպանիա վերադառնալիս: Կոլումբը հասաւ այնտեղ երեկոյեան դէմ և իսկոյն երկու մարդ ուղարկեց կղզին:

Նրանք շուտով լետ եկան և ասացին. «Փոքրիկ բերդը չըգտանք, հապա տեսանք երկու կախազան և դրանց վրայ երկու գիակ. թէ սովքեր են, չգիտենք. դժուար է իմանալ, — արդէն բոլորովին փտել են»:

Աւաւտեան Կոլումբը ինքն ափ իջաւ ու զնաց այնտեղ, ուր որ շինուած էր բերդը: Գնաց և ինչ տեսաւ. բերդը բոլորովին քանդուած էր, միայն քարերն էին մնացել. գետնի երեսին էլ ցրուցան ընկած էին հրացաններ ու սրեր: Քացի դրանից նա գտաւ տասն և մէկ սպանուած

նաւատ: Յետոյ տեսաւ, որ հնդիկների թագաւորի եղբայրն իւր մօտ է գալիս: Դա եկաւ և ասաց Կոլումբին. «Գու որ հեռացար, քո մարդիկը սկսան նեղել հնդիկներին: Մեր կղզուն մօտիկ կայ մի ուրիշ կղզի — անունն է Յիբան: Յիբանի թագաւորը բարկացաւ նաւատներիդ վրայ, սպանեց նրանց, բերդն էլ այրեց, որովհետև այդ նաւատները նրա մարդկանց տանջում էին: Պատերազմի ժամանակ իմ եղբայրը նրա դէմ գնաց և վերք ստանալով հիւանդացաւ. այժմս էլ հիւանդ պառկած է»:

Կոլումբի մարդիկը չհաւատացին այդ խօսքերին և ասացին, «Եկէք կոտորենք բոլոր հընդիկներին»: Կոլումբն ասաց. «Չէ, այդպէս չանենք: Ես կ'երթամ, հնդիկների թագաւորին կրտեսենմ»:

Գնաց թագաւորի մօտ: Թագաւորը հիւանդ պառկած էր. շատ ուրախացաւ, երբ որ տեսաւ Կոլումբին, և շատ ոսկի ընծայեց նրան: Յետոյ Կոլումբը մի աւելի յարմարաւոր տեղ ընտրեց գետակի մօտ և սկսաւ նոր բերդ շինել: Բոլոր նաւատները միասին աշխատելով կարճ միջոցում բերդի շինութիւնն աւարտեցին և սպանեցացոց իզարէլլա թագուհու սլատուին՝ անունը դրին Իգսբէլլա:

5.

Կոյումբի դտած կղզու վրայ ձմեռ չկար
և եղանակը միշտ տաք էր: Կոյումբի հետ
Սպանիայից եկած մարդիկը բարկանում էին նրա
վրայ, թէ շատ աշխատանք է տալիս նրանց:
Այն տաք երկրում աշխատելը դժուար էր: Բար-
կանալու միւս պատճառն այն էր, որ չէին
կարողանում ոսկի գտնել: Կոյումբը միշտ յոր-
դորում էր նրանց, թէ «Սպանեցէք, երբ որ
բերդը շինենք պրծնենք, այն ժամանակ կ'եր-
թանք ոսկի պտրելու»:

Բերդը որ շինեցին պրծան, Կոյումբը վեր-
ցրեց հետևակ ու ձի նստած ղինուորներ և
գնաց ոսկի պտրելու կղզու վրայ: Վայրենիները
շատ զարմացան ձիաւոր մարդիկ տեսնելով. ձի
ասած կենդանին նրանք երբէք չէին տեսել,
և հէնց որ տեսնում էին՝ փախչում էին:

Իսկ Կոյումբը շարունակ չառաջ էր գնում:
Վերջապէս հասաւ մի տեղ, ուր հնդիկների
ասելով շատ ոսկի պիտի լինէր: Այն տեղ բարձր
բարձր լեռներից աղբիւրներ էին վայր սահում
և նրանց մէջ կար ոսկու աւազ, կային և ոսկու
հատիկներ: Կոյումբը մտածեց, որ եթէ այնքան
ոսկի կա՛յ աղբիւրներում, ուրեմն սարերում
աւելի շատ կըլինէր: Եւ նա շինեց այնտեղ մի

փոքրիկ բերդ և մէջը պահապան զինուորներ
գնելով՝ վերագարձաւ Խղաբէլլա:

Գնաց այնտեղ ու տեսաւ, որ իւր նաւատ-
ները սոված են, հացի պաշարն էլ սպառուեկ
է: Կոյումբի վրայ ամենից շատ բարկացողն ու
միշտ նրան հաչհոյողը սպանիական տէրտէրն
էր: Կոյումբը նաեւց Կուբա կղզին, որ այնտեղից
հաց բերէ: Երբ որ հասաւ, հնդիկները նրա
շուրջը հաւաքուեցան փոքրիկ փոքրիկ մակույկ-
ներով ու սկսան գոռալ, որ ափի վրայ ոտք
չըդնէ: Սպանիացիք հրացաններ տուաքացրին,
և հնդիկները փախան:

Այն կղզու մօտերքում կային բազմաթիւ
մանրիկ կղզիներ: Կոյումբը արքայական պար-
տէզ անուանեց նրանց: Այնտեղ նա շատ թրու-
չուններ տեսաւ. երբ որ դրանք թռչում էին,
արեգակը մթնում էր, ինչպէս մթնում է մի
մեծ ամպից: Տեսաւ նմանապէս, թէ ինչ կեր-
պով էին ձուկ բռնում հնդիկները: Նրանց ջը-
րերում գտնվում է մի տեսակ ձուկ, որ տառե-
լի նման սուր սուր ատամներ ունի և շատ
ազահ է: Հնդիկները բռնում էին այդ ձկան,
թոկ էին կապում նրա պոչից ու ծովը թողնում:
Այնտեղ նա որսում էր մի ուրիշ ձուկն և կամ
կրիայ: Այն ժամանակ նրան դուրս էին քաշում,
բռնած որսը հանում էին բերնից, իսկ իրեն

նորից ջուրն էին ձգում: Այդ ձկան ծնօտներն այն աստիճան մանր են, որ նա կարող է երկու փուտանոց կրիայ բռնել ու վերցնել ատամներով: Հնդիկ ձկնորսները բարեկամացան Կոլումբի հետ և զանազամ կրիաներ ընծայեցին նրան:

Նաւաստները Կուբայի շուրջը նաւելիս նկատեցին, որ ծովը տեղ տեղ կանաչ է, տեղ տեղ սպիտակ. տեղ էլ կայ, որ թանաքի պէս սև է: Ամենևին չէին հասկանում, թէ ինչ է դրա պատճառը: Կոլումբն ասաց նրանց, թէ ծովի յատակն ինչ դոյն որ ունենայ, ջուրն էլ այն գոյնը կ'ունենայ:

Ազգու շուրջը պտտելուց յետոյ Կոլումբի նաւը կանգ առաւ մի ափի մօտ: Այնտեղ նաւաստները մի խաչ տնկեցին և աղօթք արին Աստծուն: Այդ միջոցին մի հնդիկ մօտեցաւ նրանց՝ տեսնելու համար, թէ ինչ են անում: Նա մի պտուղ տուաւ Կոլումբին իւր կզգու բերքից, յետոյ նստաւ տափի վրայ և ասաց նրան. «Գու այնպէս ահաւոր երևեցար մեզ այս տեղ գալիս, որ մենք ամենքս շատ վախեցանք քեզանից: Քայց իմացած լինիս, որ անդի աշխարհում երկու տեղ կայ մարդկանց համար. մէկը մռայլ ու խաւար է—այն չարերի համար է. միւսը պայծառ ու լուսաւոր է—այն էլ բարի մարդկանց համար է: Այնտեղ միայն այն մար-

դիկը կըբնակուին, որոնք չեն վնասում ուրիշներին: Եթէ այս բանին հաւատում ես, ուրեմն մի՛ նեղիր մեզ, մենք էլ քեզ վնաս չենք տալ»:

Կոլումբն ասաց նրան. «Ուրախ եմ, որ դու հաւատում ես միւս աշխարհի դատաստանին: Ես ոչ թէ ձեզ վնասելու համար, հապաղաւթիւն անելու եմ այստեղ եկել: Ինձ ուղարկել է սպանիացոց թագաւորը. նա հրամայել է ինձ, որ չար մարդկանցից պաշտպանեմ ձեզ և օգնեմ ամեն նեղուածներին: Կոլումբի խօսքերը դուր եկան հնդիկին, և նա ասաց. «Քրքան կ'ուզէի Սպանիա զնալ քեզ՝ հետ միասին. բայց սիրտս չի տալ, որ ծնողներիցս բաժանուիմ»: Այդ հնդիկն զանազան բաներ ընծայեցին. նա շատ զոհ մնաց և ուրախ սրտով տուն վազեց:

Կոլումբը հիւանդացաւ. ոչինչ անել չէր կարողանում, թուլացել էր, գիշերները չէր քնում: Նաւաստները վախենալով որ նա կըմեռնի, բերդ տարան նրան: Այդ միջոցին բերդում գտնվում էր նրա Քարթոլիմէոս եղբայրը, որ նոր էր եկել Սպանիայից, նոր պաշար և նոր զօրք բերելով: Կոլումբը վաղուց չէր տեսել նրան և շատ ուրախացաւ, երբ որ տեսաւ:

6.

Առողջանալուց յետոյ Կոլումբը գնաց կղզիներ: շուրջը պտտելու և իւր տեղը յանձնեց մի գնտապետի: Քահանան սկսաւ խորհուրդ տալ այդ գնդապետին. որ իւր հետ միասին Սպանիա գնայ և Կոլումբի վրայ գանգատ անէ թագաւորին: Գնդապետը յօժարացաւ, և նրանք գնացին. իսկ զինուորներն առանց գնտապետի մնալով, սկսան նեղել Հնդիկներին. սրանք էլ նրանց վրայ դաշտացան:

Հնդիկների արտերուժ շատ հայ կար. նրանք ցորեն չէին ցանում, ցորենը բուսնում էր ինքն իրեն: Հնդիկները ծոյլ մարդիկ էին և քիչ բան ուտող. մի բուռն սիմինտըրը ամբողջ օրուան բաւական էր նրանց: Սպանիացի զինուորները սկսան հաւաքել և ուտել նրանց դաշտերի ցորենը: Ցորենը պակասեց. սպանիացիք շատակեր էին, որովհետև շատ էին աշխատում: Հնդիկները տեսնելով որ նրանք շատակեր մարդիկ են, մտածեցին. «Այս սպանիացի զինուորներն ու նաւաստները որկրամոլ են. երևի թէ իրենց երկրում եղած հացը կերել պրծել են, որ այժմ եկել են մեր ունեցածն էլ ուտելու»: Այսպէս ասելով Հնդիկները վճռեցին բերդի վրայ լարձակուիլ և կոտորել սպանիացոց:

Ամեն մի Հնդիկ իշխան իւր զօրքերը հաւաքեց և բոլորը մի տեղ գումարուեցան. նրանց թիւը հարիւր հազարի կըհասնէր: Երբ Կոլումբն իմացաւ, որ նրանք զօրք են հաւաքել, ինքն էլ իւր զօրքը հաւաքեց: Հնդիկները մօտեցան բերդին: Կոլումբը նրանց զէմ գնաց: Նրա զօրքը բազմաթիւ չէր. ունէր միայն երկու հարիւր հետևակ զինուոր ու քսան ձիուոր: Իսկ Հնդիկները շատուոր էին: Նրանք զինուած էին լախտերով, աղեղներով ու նետերով: Նետերի ծայրին ձկան սակորներ և սուր սուր քարեր էին ցցուած:

Կոլումբը չէր ուզում սկսել կռիւր, հապա սպասում էր զիշերուան: «Գիշերով պատերազմեին աւելի լաւ է», մտածում էր նա. «ես շներով կ'որսամ մերկ ու տկար Հնդիկներին»: Նա շատ շներ ունէր: Հնդիկներն էլ չքսկսան պատերազմը, և քուն եղան: Հէնց որ զիշերը վրայ հասաւ, Կոլումբը երեք մաս բաժանեց իւր զօրքն և պատերազմի նշան տուաւ: Նշանը տրուելուն պէս նրա մարդիկը հրօցսմներ արձակեցին, շներին բաց թողին ու սկսան գոռալ: Քնահար Հնդիկները վախեցան ու փախան: Կոլումբի զինուորներն ընկան նրանց ետևից, շներով հալածեցին, ձիերով սանակոխ արին. շատերին մեռցրին հրացանով, շատերին էլ ողջ

ողջ բռնեցին. մնացածները դէս ու դէն փախան ու թաք կացան:

Կոլումբը գնաց կղզու ներսերը. իւր ուր գնում էր, Հնդիկներն իսկույն Հնադանդվում էին նրան. կարճ միջոցում նա նուաճեց բոլոր կղզին:

Նուաճեց կղզին ու մտածեց. «Սպանիա գնացած քահանան ո՞վ դիտէ ի՛նչ սուտ բաներ կրպատմէ թագաւորին իմ մասին. թագաւորն այժմ ոսկու կարօտ է»: Եւ Կոլումբը հարկ դրաւ Հնդիկների վրայ: Ուր որ ոսկին առատ էր, այն տեղ հարկը ոսկով պիտի վճարէին. ուր որ ոսկին պակաս էր—մանուածներով:

Այդ հարկը ծանր երևցաւ Հնդիկներին: Նրանք և՛ս աւելի զայրացան օտարների վրայ և որոշեցին այրել իրենց բոլոր ցանքերը: Կրակ տուին արտերին, իրենք էլ փախան անտառներն ու լեռները: Այնտեղ բացի վայրենի խոտերից ու արմատներից՝ ուտելու բան չէր ճարվում. այն պատճառով Հնդիկները մեծ նեղութեան մէջ ընկան, հիւանդացան և այն աստիճան թուլացան, որ հաղիւ էին ման գալիս: Իսկ սպանիացիք ոչ մի բանի կարօտութիւն չէին քաշում, որովհետեւ ուտելու պաշար շատ ունէին. Կոլումբի Քարթոգիմէոս եղբայրն ամեն բան բերել էր Սպանիայից:

Սպանիա դնացած քահանան թագաւորի պալատը մտաւ և ասաց նրան. «Ես գալիս եմ Կոլումբի դտած աշխարհից. այնտեղ ոչ հաց կայ, ոչ էլ ոսկի—ոչինչ չկայ. ինչ որ պատմել էր քեզ Կոլումբը—բոլորը սուտ է»:

Թագաւորը հաւատաց քահանային և մի դեսպան ուղարկեց Հնդկաստան, որ պնայ տեսնէ, թէ ինչպէս է սպրում Կոլումբը և ինչ բաներ կան նոր երկրում: Այդ դեսպանի անունն էր Ազվադօ:

Ազվադօն դնաց Իզաբէլլա բերդն և կըշտամբեց Կոլումբին կծու կծու խօսքերով: Կոլումբը ոչ մի բան չասաց, այլ որոշեց Սպանիա նաւել թագաւորին տեսնելու համար: Նա յանձնեց իւր պաշտօնը Քարթոգիմէոսին, իսկ Ռօլանդին նաւատները վրայ իշխան կարգեց: Ռօլանդը մի չար մարդ էր. բայց Կոլումբը նրա չար լինելը չգիտէր. եթէ ոչ՝ իւր պաշտօնը նրան չէր տալ: Կոլումբն ուղիղ ճանապարհ բռնեց շուտով Սպանիա հասնելու համար և ոչ մի անգ կանգ չառաւ:

Քամին հակառակ լինելով Կոլումբի նաւը շատ ծանր էր յառաջ գնում: Արդէն երեք ամիս է որ նա ճամբու վրայ էր, բայց էլի գե-

տինը չէր երևում: Նաւատները կերել պրծել էին նաւի վրայ եղած պաշարը. ուրիշ ուտելիք չէր մնացել: Աերջապէս նրանք ուզում էին մորթել ուտել նաւի վրայ գտնուող հնդկիներին, և գուցէ այդպէս էլ անէին, եթէ յանկարծ չտեսնէին Սպանիայի ափերը:

Այլումբը ցամաք իջաւ և գնաց թաղաւորի մօտ, իւր հետ տանելով Հնդկաստանից բերած իրերն ու ոսկին: Թաղաւորը նրա հետ խօսելուց լետոյ ամաչեց, որ հաւատացել էր քահանային, և ասաց. «Այլումբ, ես նորից կըհրամայեմ նաւեր շինել քեզ համար, և դու կըստանաս ամեն բան, ինչ որ քեզ հարկաւոր է»:

Այլումբն ասաց. «Ինձ հարկաւոր են դանազան արհեստներ զխտեցող մարդիկ. եթէ անդպիտի մարդիկ տաս ինձ, այն ժամանակ իզարէլլա բերգում ոչ ոք նեղութիւն չի քաշի: Ինձ հարկաւոր են և զետին փորելու վարժուած մարդիկ, որ զետնի տակից ոսկի հանեն»:

Թաղաւորը պատասխանեց. «Ոսկի հանելու համար ես կ'ուզարկեմ բանտերում պարսպ նրստած մահապարտներին»:

Այլումբը հեռացաւ թաղաւորի պալատից. բայց թաղաւորը շուտով չկատարեց իւր խոստումը: Այլումբը սպասեց մի ամբողջ տարի, մինչև որ նաւերը շինուին: Այդ միջոցին նա

պարսպ նստած մաշվում էր: Աերջապէս նաւերը շինուեցան, և նա ճանապարհ ընկաւ:

Վանարեան կղզիները հասնելուց լետոյ Այլումբը հրամայեց, որ նաւերի մի մասը ուղիղ գնայ Իզարէլլա, իսկ ինքը բռնեց ուրիշ ճանապարհ և հասաւ Աղի կղզիները: Այդ կղզիները շատ անբարեբեմ, զրեթէ ոչ մի պտուղ չեն տալիս, և այնտեղ ոչ ոք չէր բնակվում, բայց միայն Պորթուգալիայից աքսորուած չարագործները: Գրանք էլ կրիաներ որսալով էին ապրուստ ձարում: Արիաները լողալով մօտենում էին ծովափին և ձու էին դնում աւաղի մէջ. աքսորուած մարդիկը սպասում էին, մինչև որ ձագեր դուրս գան ձուերից, և լետոյ բռնում էին: Արիայ բռնելը շատ հեշտ է. նա ծանր է ման գալիս: Եթէ նրան մէջքի վրայ դարձնես, պառկած կըմնայ ու չի փախչիլ:

Այլումբն երկար չըմնաց այդ կղզիների վրայ և շարունակեց յառաջ նաւել: Նաւեց մի քանի ժամանակ և հասաւ մի այնպիսի տեղ, ուր զրեթէ երբէք քամի չէ փչում: Առադաստները վայր ընկան, հողմ չկար, որ փքուէին. այս պատճառով նաւերը կանգնեցան և չէին կարողանում յառաջ գնալ: Այնտեղ արևը շատ կիզիչ էր. սաստիկ տօթից նաւաստները տանջվում էին և չէին իմանում, թէ ո՞ր փախչեն:

Քոյրը գինու շիշերը տաքուել էին, անապակ ջուրն էլ հոտել էր: Նաւերը չորանալով սկսել էին ճաքճքել: Մարդիկ մնացել էին անձարացած:

Յանկարծ մի այնպիսի թունդ անձրև տեգաց, որ ոչ մի մարդ չկարողացաւ ստքի վրայ կանգնած մնալ. ամենքն էլ ուրախացան և սկսան անձրևի ջուր հաւաքել— շատ էին ծարաւել: Անձրևից յետոյ քամի փչեց, և նաւերը ճանապարհ ընկան:

Մի քանի օրից յետոյ երկիր երեցաւ: Եզերքի վրայ ահագին լեռներ էին բարձրանում և լեռներից դուրս գալով մի գետ էր թափվում ծովի մէջ: Նրա անունն էր Օրինոկո: Գետաբերանի մօտերքում ծովի ալիքն այնքան մեծ էին, ու նաւերը չէին կարողանում գետը մանել: Այդ տեղը Կոլումբն անուանեց Օձի բերան:

Եզերքի վրայ հնդիկներ կային. դրանք Կուբայի հնդիկներին նման էին, միայն թէ նրանց պէս մերկ չէին, հասցա դանազան կտաւներ ունէին հագին: Ականջներից մարգարիտներ ու սկաւ կտօրներ էին կախ արած, և այդ բաները նրանք տալիս էին սպանիացոց էժան էժան ապրանքների փոխարէն: Օրինոկոյի հընգիկներն երկար երկար մաղերով էին. նրանց գէնքերն էին— նետ, աղեղ ու վահան:

Կոլումբը կամենում էր աւելի երկար մնալ

նրանց մօտ, բայց չէր կարող. նրան պէտք էր չառաջ գնալ, որ շուտով հասնէր Իզաբէլլա:

Նա թողաւ Օրինոկոն և նաւեց դէպի Իզաբէլլա: Ճանապարհին դտաւ Մարգարիտա կղզին, որ շատ հարուստ էր մարդարտով:

Մինչդեռ Կոլումբը բացակայ էր Իզաբէլլա բերդից, նրա Բարթողիմէոս եղբայրը շինել էր մի ուրիշ բերդ և անունը դրել էր Սան-Գոմինդո: Այդ միջոցին Իզաբէլլայում նստած Ռօլանդը դրդեց ամենքին, որ իրեն զլխաւոր իշխան ընտրեն, իսկ Կոլումբի եղբօրը վճռտեն: Ռօլանդն արշաւեց Բարթողիմէոնի դէմ, հալածեց նրան և ուղեց յափշտակել Սան-Գոմինդոն: Բայց Սան-Գոմինդոն ամուր էր շինուած, և Ռօլանդը չէր կարողանում նուաճել նրան: Հէնց այդ միջոցին եկան Կանարեան կղզիներից Կոլումբի ուղարկած նաւերը: Ռօլանդը այդ նաւերի նաւապետներին էլ խաբեց և նրանց բերած բոլոր ապրանքն ու պաշարքիւր մօտ տարաւ:

Երբ որ Կոլումբն Իզաբէլլա հասնելով այն տեղ պատահած դէպքերն իմացաւ, մարդ ուղարկեց Ռօլանդի մօտ և ասել տուաւ. «Եթէ ապստամբելուց յետ կանգնեօ, եօ քեղ կընտրեմ. իսկ եթէ ընդդիմանաս, բանդ վատ կըլինի»: Ռօլանդը վախեցաւ Կոլումբից և իսկոյն հնազանդութիւն չալտնեց նրան:

Յետոյ Կոլումբը մի նաւ պատրաստեց և ուղարկեց Սպանիա. նամակ էլ զրեց թագաւորին, թէ այս անգամ ուրիշ ճանապարհով է եկել, քան թէ առաջ, և գտել է մի նոր երկիր, ուր հոտում է Օրինոկոն: Նամակի հետ նա ուղարկեց թագաւորին մարդարիտ, ոսկի, զանազան կտաւներ և ամեն բան, ինչ որ գտել էր նոր աշխարհում:

Ռօլանդն էլ նամակ զրեց թագաւորին: Գրում էր. «Չհաւատաս Կոլումբին ու նրա եղբորը. զրանք քեզ կողոպտում ու խարում են»:

Թագաւորը նամակները որ ստացաւ, բաներ հարցրեց Կոլումբի մասին նրա հետ նաւորդած մարդկանցից: Նրանք էլ բարկացած լինելով Կոլումբի վրայ, ասացին թագաւորին. «Մենք նոր երկիր որ գնացինք, հարուստ էինք. իսկ այժմ աղքատ ու հիւանդ ենք յետ գալիս: Մեզաւորը Կոլումբն է: Նա խարեց մեզ ասելով, թէ այն երկիրը հարուստ է և շատ ու շատ ոսկի ունի: Նա քեզ էլ է խարում. այնտեղ ոչ մի հարստութիւն չկայ»: Եւ ուրիշ շատ ստեր ասացին: Թագաւորը լսեց այդ բոլորն և Հնդկաստան ուղարկեց իւր ծառաներից մէկին, որ գնայ իմանայ զորդն ու սուտը Կոլումբի մասին: Ծառանի անունն էր Բոգադիլլա:

Բոգադիլլան Իզաբելլա հասաւ. բայց այդ

միջոցին Կոլումբը տանը չէր— գնացել էր կղզու վրայ շրջելու: Բոգադիլլան իջաւ Կոլումբի տունը, իբրև իւր տունը, և այնտեղ նստելով լուր տարածեց ժողովրդի մէջ, թէ նրան ուղարկել է թագաւորը Կոլումբի տեղը բռնելու համար: Յետոյ արձակեց Կոլումբի բանտարկած ապտամբներին և զրդեց նրանց, որ նրա գէմ գանդատ զրեն: Ինքն էլ մի թուղթ գրեց Կոլումբին, թէ «Ե՛կ և բոլոր զործերդ ինձ յանձնիր»: Կոլումբն եկաւ: Բոգադիլլան խօսել անգամ չուզեց նրա հետ և հրամայեց կապել նրան շղթաներով:

Կապեցին Կոլումբին շղթաներով և բանտարկեցին մի նաւի մէջ. նրա եղբօրն էլ փակեցին: Բոգադիլլան ուզում էր մինչև անգամ սպանել նրանց, բայց վախեցաւ թագաւորից: Այս պատճառով նա հրամայեց երկուսին էլ Սպանիա տանել և միևնոյն ժամանակ նամակ զրեց իւր ազգականներից մէկին, որ սա մի կերպով մեռցնէ նրանց:

Երբ որ նաւերը մեկնեցան, նաւապետն ուզեց հանել Կոլումբի շղթաները, բայց Կոլումբն ասաց. «Մէկ անգամ որ շղթայեցիք ինձ, շղթայուած էլ տարէք թագաւորի մօտ»:

Հասան Սպանիա: Այնտեղ նաւատեսներից մէկը խզճաց Կոլումբին և ասաց նրան. «Գրի՛ր

Թագաւորին, թէ ինչպէս վարուեցան քեզ Հետ, ես ինքս կրտաճեմ նամակդ և կըհասցնեմ Թագաւորին»:

Կոլումբը գրեց: Թագաւորը կարդաց թէ չէ նամակը, իսկոյն հրաման տուաւ արձակելու Կոլումբին և իւր մօտ կանչեց նրան: Կոլումբը քնաց: Թագաւորը նրան ասաց. «Կոլումբ, ներքի բնձ. ես չէի հրամայել, որ կապեն քեզ շղթաներով. ես կամեցիլ էի միայն իմանալ, թէ ինչպէս ես ապրում, ինչ կեանք ես վարում, և ասել էի, որ ինձ տեղեկութիւն տան այդ մասին: Իսկ շղթաներով կապուելուդ համար ես կըզրկեմ Բոգաղիլլային պաշտօնից և կըպատժեմ նրան»: Կոլումբը ոչինչ չասաց: Թագաւորն իւր պալատում սենեակ տուաւ Կոլումբին, իսկ նրա տեղ Հնդկաստան ուղարկեց Նիկողայոս Օվանդօյին: Կոլումբը վշտացաւ Թագաւորից, թէ ինչո՞ւ իրեն չուղարկեց: Նա նորից շղթաներ դրաւ իւր վրայ ու սկսաւ ման գալ շղթաներով ցոյց տալու համար, թէ ինչպէս են վարձատրել իւր հաւատարիմ ծառայութիւնը: Եւ ասաց ազգականներին. «Յըր որ ես մեռնեմ, այս շղթաներն էլ դադարիս մէջ գրէք»:

Կոլումբը մի քանի ժամանակ Թագաւորի պալատում բնակուելուց յետոյ ձանձրացաւ. ուրում էր դուրս գալ այն տեղից և նորից նաւել ծովերի վրայ: Նա դնաց Թագաւորի մօտ և ասաց. «Տէր արքայ, եթէ չես կամենում, որ ես դնամ նոր աշխարհը, գոնէ թոյլ տուր, որ մի ուրիշ ճանապարհ գտնեմ դէպի Աէստ-Ինդիան (Արեւմտեան Հնդկաստանը)»:

Այն ժամանակ Արեւմտեան Հնդկաստան տանող ճանապարհը շատ երկար էր, և բոլոր դիտնականները հետամուտ էին իմանալու, թէ արդեօք չէ՞ր կարելի հասնել այնտեղ աւելի կարճ ու մօտիկ ճանապարհով: Թագաւորը մրտաճեց ու հրամայեց մի քանի նաւ տալ Կոլումբին: Եւ նրան տուին չորս անշահ նաւ: Կոլումբը դրանցմով էլ գոհ մնաց, առաւ իւր հետ եղբօր որդուն, մի քանի նաւաստ ու գնաց:

Նաւարկութիւնը յաջողակ էր, ոչ մի տեղ ձախորդութիւն չունեցան. միայն թէ միշտ նաւերից մէկը լիտ էր մնում — չէր կարողանում արագ գնալ: Եւ Կոլումբը դիմեց գէպի Իգարէլլա, որ այդ ճանրաշարժ նաւի տեղ մէկ ուրիշը վերցնէ: Իգարէլլա որ հասաւ, Օվանդօյի մօտ դրկեց նաւն և իմաց տուաւ նրան, թէ «Յկել

եմ և ուզում եմ մի ուրիշ նաւ ստանալ»: Օվանգոն վաճառեց նրա մարդկանց և ասաց. «Մինչև անգամ թող չեմ տալ, որ դուք ծովափին մօտենաք. դնացէք կորէք այս տեղից»: Եւ այսպէս նա մի նաւ անգամ չտուաւ Կոլումբին: Կոլումբը ուզում էր մեկնիլ ծովափից, բայց վատ եղանակի պատճառով այնտեղ մնաց:

Նայն իսկ օրը Օվանգոն երկու նաւ պիտի ուղարկէր Սոլանիա. մէկը տանելու էր Յոգագիլլային ու Ռոյանդին, միւսը կրելու էր Կոլումբի կաշքը: Կոլումբն իմաց տուաւ Օվանգոյին, որ այն օրը նաւեր չարձակէ: «Մեծ փոթորիկ պիտի լինի և նաւերդ կըխորտակուին», զգուշացրեց նա. բայց Օվանգոն մտիկ չարաւ և արձակեց նաւերը:

Նաւերը դուրս ելան թէ չէ, սոսկալի մրրիկ բարձրացաւ. նրանք սուգան, ընկզմեցան (չըն տակ գնացին) ալէկոծութեան ժամանակ, միջի մարդիկն էլ խեղդուեցան. փրկուեցաւ միայն այն նաւը, որի վրայ գտնվում էր Կոլումբի կաշքը:

Այնուհետև սկսան ասել Կոլումբի մասին, թէ սատանան էր օգնել նրան, որ նաւերը խորտակուին: Կոլումբն սպասեց, մինչև որ փոթորիկը անց կենայ, և ապա թէ ճանապարհ ընկաւ:

Նաւատոնների հետ յառաջ գնալով նա հա-

սաւ մի երկիր: Մօտեցան եզերքին ու տեսան, որ այնտեղ մի ծածկաւոր նաւ է կանգնած: Նաւի ծածկույթն էր տերեւներից, և մէջը նրստած էին հնդիկ կանայք, երեխաներ ու շատ մարդիկ: Կոլումբը նաւատոնները գերի բռնեցին այդ բոլոր հնդիկներին: Գրանք մերկ չէին, հապա հագնուած էին, և ունէին մեծ մեծ տէղեր ու փայտէ սրեր. ընակվում էին գետնափոր տնակներում: Կոլումբը զանազան բաներ ընծայեց նրանց, յետ տուաւ բռնած նաւն և հրամայեց, որ ամենքն էլ տուն վերադառնան. նա թողաւ իւր մօտ միայն մի ձեր հնդիկ, որ ամենից խելօքն էր: Եւ դա պատմեց Կոլումբին, թէ մի ուրիշ երկիր կայ իրենց կղզու մօտերքում, և այնտեղ ոսկին աւատ է: Կոլումբը յառաջ գնաց:

Ճանապարհին, մի կղզու վրայ, նա գարձեալ տեսաւ վայրենի մարդիկ. զրանք մերկ էին ման գալիս, ամեն բան հում հում էին ուտում— ոչ մի բան չէին եփում: Ականջներից կախ էին ընկած մեծ մեծ օղեր. կարծում էին, թէ այդ օղերը շատ գեղեցկութիւն են տալիս նրանց: Քրեթէ ամենքի երեսը ներկած էր—մէկինը կարմիր, մէկինը սև, շատերինն էլ տեսակ տեսակ գոյներով: Իշխանները կարմիր կարմիր գտակներով էին:

Կոլումբի նաւը խորտիւ ձգեց. վոքը ինչ
 գէնը վայրենի մարդիկ եին նաւում: Նրանք
 Կոլումբի նաւատներին տեսնելով մտածեցին.
 «Սրդեօք ինչ մարդիկ են այս եկաւորները»:
 Գեռ ոչ մի ժամանակ սղանիացի նաւատներ
 չէին տեսել և սկզբում շատ էին վախենում մօ-
 տենայ նրանց. չետոյ սովորեցան և զանազան
 ընծաներ ուղարկեցին: Կոլումբը չուզեց ընդու-
 նել այդ ընծաներն և իւր կողմից մի քանի
 մանր բաներ ուղարկեց վայրենիներին: Նրանք
 մէկ մէկ աչքէ անցրին այդ բաներն և ասացին.
 «Կոլումբը մեր սիրտը ցաւցնում է. մեզնից ըն-
 ծաներ չէ ընդունում, իսկ ինքը տալիս է»:
 Յետոյ հաւաքուելով խորհուրդ տեսան և Կո-
 լումբի տուած բոլոր պարզւաները չետ ուղար-
 կեցին:

Կոլումբը վերցրեց մի գրագիր և նրանց
 մօտ գնաց: Հրամայել էր գրազրին, որ վայրե-
 նիներն ինչ որ խօսեն, զրի անցնէ: Բայց երբ
 վայրենի մարդիկ տեսան, որ գրազրը գրիչ է
 հանում կողամարից (թանաքամանից), կարծե-
 ցին թէ կախարդում է, — սարսափեցան ու փա-
 խան: Կախարդութիւնը փարատելու համար
 նրանք մի տեսակ խոտ այրեցին. այրելուց չե-
 տոյ ոխրտ առին և նորից մօտեցան զրազրին:
 Այն ժամանակ Կոլումբը նրանց զիւր գնաց:

Գնաց ու մի փայտաշէն տուն տեսաւ. նայեց
 վրան ու հարցրեց. «Այս ում տունն է»: Այս-
 րենիները պատասխանեցին. «Այստեղ մենք
 թաղում ենք մեր մեռելները»: Կոլումբն էլ ու-
 զեց աեսնել, թէ ինչպէս են թաղուած նրանց
 մեռելները: Ներս մտաւ ու մի քանի շարք դա-
 գաղներ տեսաւ. չամեն մէկի մօտ մի մի տախ-
 տակ էր դրուած. տախտակների վրայ դազան-
 ներ ու մարգու պատկերներ էին նկարուած:

Կոլումբը դիտեց այդ բոլորն և գէպի իւր
 նստը վերադարձաւ վայրենիների հետ միասին:
 Վայրենիներն երկար մնացին Կոլումբի մօտ:
 Նրանց ազգականները տեսնելով որ նրանք ու-
 շացան ու չետ չեն դալիս, ասացին. «Երեւի թէ
 Կոլումբը բռնել է նրանց և չէ ուզում բաց
 թողնել»: Գնացին նրա մօտ և հետերը վերցրին
 երկու վարազ (վայրենի խող), որ նրան ընծայեն:
 Գնացին նրա մօտ և ասացին: «Առ այս խողերն
 և արձակիր մեր ընկերներին»: Կոլումբն ասաց.
 «Թող գնան. չեմ բռնում նրանց»: Վայրենիները
 վերցրին ընկերներին ու հեռացան:

Երբ որ Կոլումբը յառաջ նաւեց, մի կզգու
 մօտերքում վայրենի մարդիկ յարձակուեցան նրա
 նախ վրայ: Կոլումբը հրամայեց նաւատներին,
 որ ձեռ չտան նրանց: «Մի գիպչէք նրանց.
 նրանք ինքեանք կըհեռանան», ասաց նաւ Այս-

ընդհանրն երկար ժամանակ նուերի շուրջը պրտոյտ գալուց լետոյ յոգնեցան ու դադարեցին նետեր ձգել: Փոքր ինչ լետոյ նրանք ափ իջան և սկսան առևտուր անել Կոլումբի հետ: Կոլումբը շատ նաւաստներ չունէր: Վայրենիները տեսնելով որ նրանց թիւը քիչ է, սկսան նորից կռուել նրանց դէմ: Կոլումբը հրամայեց թնդանօթներ արձակել: գրանք լցուած էին միայն վառօդով: Երբ վայրենիները տեսան, որ հրետները (թնդանօթները) ամենևին չեն վնասում նրանց, սաեյի սաստիկ լարձակուեցան Կոլումբի վրայ: Այն ժամանակ նա հրամայեց ուժերը (գնտեր) արձակել: Վայրենիների սիրտը գող ընկաւ, ու նրանք փախան:

9.

Կոլումբի հացի պաշարը հատնելու վրայ էր, և նա մտածեց. «Սրդեօք լաւ չի լինիլ, որ ես՝ փոխանակ Երևմտեան Հնդկաստանը որոնելու, այն երկիրը գնամ, ուր որ վայրենիների տեսելով շատ սոկի պիտի լինի»: Եւ գնացայնտեղ:

Ճանապարհին շնաձկներ պատահեցան նրան: Ձնաձուկը մի ահագին ծովային կենդանի է՝ մեծ բերանով և սուր սուր ատամներով. նա կարող է ողջ ողջ կուլ տալ մարդու: Նրա ոյժը պոչի մէջ է: Այդ ձկների մասին զարմանալի

բաներ են պատմում: Մի անգամ մարդ է մեռնում նաւի վրայ. նրան փաթաթում են առագաստով ու ծովն են ձգում: Ձնաձուկն իսկոյն նրան կուլ է տալիս: Ձնաձկան բռնում են, և քնչ են տեսնում — տեսնում են, որ մարդու դիակը ինչպէս որ ջուրն էր ձգուել, այնպէս էլ փաթաթուած պառկած է նրա փորում: — Ձնաձկան միտը համեղ չէ. վայրենի մարդիկ խաշած են ուտում նրա միտը: Երբ որ Կոլումբի հացի պաշարը հատաւ, նրա մարդիկն էլ սկսան շնաձուկն ուտել: — Մի օր նրանք այնպիսի վայրենիներ տեսան, որոնք ծառերի վրայ էին տուն շինում: Ծառերի վրայ տուն շինելու պատճառն այն էր, որ վախենում էին կատաղի գազաններից:

Կոլումբը հասաւ Վէրոյուա և հարցրեց բնակիչներին, թէ ո՞ր տեղ է գտնվում նրանց ոսկին: Բնակիչները գնացին Կոլումբի հետ և ցոյց տուին ոսկու տեղը: Սկզբում Կոլումբը չէր հաւատում նրանց և հրամայեց նաւաստներին, որ փորեն գետինն ու տեսնեն, թէ ի՞նչ կայ մէջը:

Նաւաստները սկսան փորել և ուղիղ՝ մեծ քանակութեամբ ոսկի գտան: Կոլումբն ուրախացաւ և ասաց ինքն իրեն. «Այտեղ պէտք է մի քաղաք շինել»: — Ասաց, և սկսաւ շինել: Իսկ այն երկրի Քվիբեթ թագաւորը տեսնելով որ Կոլումբը քաղաք է շինում նրա երկրում, ուզեց

այրել այդ քաղաքը: Կոլումբը մարդիկ ուզարկեց թաղաւորի դէմ: Նրանք գնացին, խաբելով բռնեցին Քվիբեօյին, ձեռքն ու սաքը կապեցին, նաւակի մէջ ձգեցին և այդպէս տարան դէպի այն նաւը, ուր որ Կոլումբը ոգրատում էր:

Մութ գիշեր էր. ոչ մի բան չէր երևում: Քվիբեօն նաւակում պառկած տնքում էր— շատ ամուր էին կապել նրան: Նաւատներից մէկը մեղքացաւ նրան և բաց արաւ կապերը: Հէնց որ վայրենին արձակ զգաց ինքն իրեն, նաւակի միջից ջուրն քնկաւ ու լող տուաւ դէպի կղզին: Փորձեցին հասնել ետևից, բայց չհասան: Եւ նա փախաւ:

Քուբեօն իւր կղզին հասնելուն պէս հաւաքեց իւր հպատակներին և զնաց Կոլումբի քաղաքն այրելու: Քուբեօյի գէմ ելաւ Կոլումբի Բարթողիմէոս եղբայրը, բայց չկարողացաւ յաղթել նրան: Քուբեօն ջարդեց Բարթողիմէոսի զինուորներից շատերին և նրան էլ վիրաւորեց:

Այնուհետև Կոլումբը նաւեց դէպի Իգաբէլլա, բայց չհասաւ այնտեղ. փոթորիկը մղեց նրան դէպի մի ուրիշ կղզի— դա էր Եամայկան: Նա երկար մնաց Եամայկայում, որովհետև հեռանալու հնար չունէր. նրա նաւը վնասուել էր և ոչ մի բանի պէտք չէր զարխ:

Կոլումբը տխրեցաւ ու մտածում էր. «Ինչպէս մեկնիմ այս տեղից»: Այն ժամանակ նա-

ւասաններից երկու հսգի մահույի նստան և վրձուեցին զնալ Օվանդոյի մօտ ու խնդրել, որ նա Կոլումբին մի նաւ տայ: Մնացողները նստած սպասում էին նրանց վերադարձին:

Ապասեցին, սպասեցին, բայց վերադարձող չկար: Աերջապէս ձեռ վեր առան սպասելուց ու պառցին. «Մեր նաւատները սպանուած կըլինին»:

Կոլումբը հիւանդացաւ: Նրա մօրդիկը սուքի ելան ու սկսան խօսել իրենց մէջ, թէ «Ինչո՞ւ բերաւ մեզ այնտեղ, այս օտար աշխարհը, ուր ոչ ուտելու սնունդ կայ, ոչ էլ նաւ կայ, որ տուն գնանք»: Եւ նրանցից մէկը գնաց Կոլումբի մօտ և ասաց. «Ինչու իզարէլլա չես գնում»: Կոլումբն էլ պատասխանեց. «Յեթ էս նաւ զանէի, առանց քո ասելուն էլ կ'երթայի»:

Նաւատների ապրտամբութիւնը սատակացաւ. նրանք յափշտակեցին հնդիկներից մի նաւակ, մէջը նստան ու հեռացան Կոլումբից: Հէնց որ հեռացան, փոթորիկ բրդաւ: Նաւակը սկսաւ տատանուիլ, մէկ դէսն էր թեքվում, մէկ դէնը: Ծովի վրայ ահադին այլքներ բարձրացան և նաւակը ջրով լքցուեցաւ: Նաւատները վախեցան, որ չլինի թէ խեղդուին, ու մէկն ասաց. «Յկէք, ջուրը ձգենք հնդիկներին, որ նաւակը թեթևնայ ու չընկղմի»: Այնցին և ձուր նետեցին հնդիկներին: Հէնց որ մէկին

ջուրն էին նեւում, նա լող տարով լետ էր գալիս ու բռնում էր նաւից: Իսկ նաւասանները կացնով կարում էին նրա ձեռքը:

Նաւաստները որ հեռացան, Կոլումբն աւողջացաւ: Սիրտը նեղանում էր, և նա ասաց ինքն իրեն. «Գնամ, Քրիստոսի հաւատը ստորեցնեմ հնդիկներին»: Գնաց նրանց մօտ և ասաց. «Ձեր աստուածները սուտ աստուածներ են. ճշմարիտ Աստուածը Նա է, որին մենք ենք աղօթք անում: Նա ձեզ կըպատէ, եթէ դուք էլ նրան աղօթք չանէք»:

Վալրենիները ծիծաղեցան Կոլումբի վրայ, և նա ասաց. «Մի ծիծաղէք. ահա շուտով ձեր գլխին Աստուած պատիժ կըրերէ — արեգակը կը խաւարի և ամեն բան կըմթնի»: Վալրենիները նորից սկսան ծիծաղել — չէին հաւատում նրա խօսքերին: Մէկ էլ սևտան՝ արևն իրօք իսւաբեցաւ: Վալրենի մարդիկն ալ որ սևտան, ասացին. «Պատրաստ ենք աղօթք անել Աստուծուն, միայն թէ խաւարն անց կենար»: Կոլումբը հրամայեց աղօթք անել Աստուծուն և ասաց. «Հէնց որ նրան աղօթք անէք, խաւարումը կ'անցկենայ»: Վալրենիներն աղօթք արին, և խաւարը փարատուեցաւ:

Կոլումբը մնաց կղզու վրայ Քրիստոսի կրօնը քարոզելով:

Օվանդոյի մօտ գնացած մարդիկը վերջապէս ստացան մի նաւ և եկան Կոլումբի մօտ: Օվանդոն երկար ժամանակ չէր յօժարվում նաւ տալու. լետոյ վախեցաւ թագաւորից ու տուաւ: Կոլումբը նաւաստների հետ նաւ նստելով գնաց գէպի առն — Վպանիա: Քամին յաջողակ չէր, և նրանք շատ երկար նաւարկեցին:

Վպանիա որ հասան, Իդարէլլա թագուհին մեռել էր. Կոլումբն ափոտաց նրան, որովհետև թագուհին շատ լաւաթիւն էր արել նրան: Կոլումբը գնաց թագաւորի մօտ. բաց թագաւորը չընդունեց նրան ու գուրս քշեց: Կոլումբի սիրտն էլ աւելի տրամեցաւ, և նա մտածեց. «Ոչ մի պաշտպան չունիմ այժմ. մի պաշտպան անէի. նա էլ այժմ կենդանի չէ»:

Փոքր ինչ լետոյ Կոլումբը ինքն էլ հիւանդացաւ ու մեռաւ:

Կոլումբի երկրորդ նաւորդու թեան միջօցին նրա մօտ կար Օլեգոս անունով մի մարդ: Այդ մարդը Սպանիա վերադառնալուց լետոյ համոզեց Սէվիլլա քաղաքի վաճառականներին մի նաւ շինել իւր համար և հարցրեց թագաւորին, թէ կարո՞ղ է արգեօք վերստին գնալ նոր աշխարհ: Թագաւորը թոյլ տուաւ, և Օլեգոսն գնաց:

Երբ որ նա մէկնելու վրայ էր, թագաւորի իշխաններէց մէկն ասաց նրան. «Ես կըտամ

քեզ Կոյումբի շարագրած գիրքը, որի մէջ նա պատմում է, թէ ինչպէս է նաւորդել. այդ գիրքը որ կարգաս, քեզ հեշտ կրկինի նոր երկիրներ գտնելը»: Օյէգան վերցրեց գիրքը:

Նրա հետ միասին գնում էր և մի վաճա-
կան, որի անունն էր Ամերիկո-Վէտպուչի: Նա-
ւաստները նրան աւելի էին սիրում և աւելի
էին լսում, քան թէ Օյէգային: Այդ երկու մար-
դիկը մի քանի ժամանակ նոր աշխարհում մնա-
լուց լեռոյ վերագարձան Սպանիա: Այնուհետև
Ամերիկոն սկսաւ պարծենալ, թէ նոր երկիր է
գտել, և շատ գրքեր տպեց այդ մասին. իսկ
Կոյումբի գիրքը չըտպեց: Երբ որ Ամերիկոյի գրած-
ները կարդացին, նոր աշխարհի անունն էլ նրա
պատուին Ամերիկա դրին, թէ և իսկայէս պէտք
է գրուէր «Կոյումբիա», ՚ի պատիւ Կոյումբի:

Կոյումբը որ մեռաւ, նրա Գիէգօ անունով
աւագ որդին խնդրեց թագաւորից, որ սա նրա
հօրը տուած խոստումը կատարէ: Թագաւորը
դատարանի լանձնեց այդ գործը. դատարանն
էլ վճռեց, որ Կոյումբին խոստացուած երկիրն ու
փողերը որդուն տրուին: Յետոյ թագաւորն էլ
նրան շատ մարդիկ ու մի նաւ: Այդ
նաւով որ Գիէգօն գնաց Իգարէլլա: Այնտեղ
նա զօր կատար փարեց և լաւ էլ կատարեց
խիզար գտած երկիրը:



1762

0006290

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0006290

